ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

HIGHER EDUCATION AND
SCIENCE COMMITTEE
CHAIRMAN

0028, ՀՀ, ք. Երևան, Օրբելի եղբայրների 22
22 Orbeli Brothers, Yerevan, 0028, RA

Հեռ./Tel.(374 10) 21 01 40 111
Web: hesc.am; e-mail: info@hesc.am

№ 9/9.2.3/15237-2024 20. 05. 2024թ.

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻՆ
ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻՆ**

Հարգելի գործընկերներ,

ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 10-րդ կետի 1-ին պարբերության համաձայն՝ «*Ատենախոսության հիմնական արդյունքները և դրույթները մինչև ատենախոսության պաշտպանությունը պետք է հրապարակվեն միջազգային նշանակություն ունեցող՝ գրախոսվող գիտական հրատարակություններում և ԲԿԳԿ-ի սահմանած ցուցակում ընդգրկված գիտական հրատարակություններում*»:

Առաջնորդվելով նորմատիվ Կարգի 10-րդ կետով սահմանված նորմի պահանջներով և չափանիշներով՝ ԲՈՀ-ի խորհրդի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի որոշումը, այդ թվում՝ գիտաժողովի նյութերի ժողովածուներում հրապարակումների թույլատրելիությանը վերաբերող դրույթը, չեղարկվել է:

Միևնույն ժամանակ, անցումային ժամանակահատված է սահմանվում այն անձանց պարագայում, որոնց փաստաթղթերը ներկայումս արդեն ներկայացված են ԲԿԳԿ, կամ նրանց, ովքեր սահմանված կարգով մինչև ս/թ. մայիսի 31-ը դիմելու են մասնագիտական խորհուրդ՝ իրենց թեկնածուական ատենախոսության պաշտպանության հետագա գործընթացը կազմակերպելու համար:

5/20/2024

X

ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: MOVSISYAN ARTUR 1114810762 **ԱՐՏՈՒՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ**
(պարտականությունները կատարող)